ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«15» «ապրիլի» 2025 թվական № 144-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 359-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի «Թափոններ գոյացնող, վերամշակող և օգտահանող օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և ռեեստրի վարման գրքի ձևերը հաստատելու մասին» N 359-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) նախաբանում «Ղեկավարվելով» բառը փոխարինել «Հիմք ընդունելով «Թափոնների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժէ.1» կետը և ղեկավարվելով» բառերով և կետադրական նշաններով,

2. Հրամանի N 1, N 2 և N 3 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի N 1, N 2 և N 3 հավելվածների 1-ին կետը «վայրը» բառից հետո լրացնել «՝ հասցեն, օբյեկտը ներառող հողամասի շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատները՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով» բառերով և կետադրական նշաններով,

2) Հրամանի N 1, N 2 և N 3 հավելվածների 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1 _____

(օբյեկտը շահագործող իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, գտնվելու վայրը, հաշվառման հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)»,

3) Հրամանի N 1, N 2 և N 3 հավելվածների վերջում «200» թիվը փոխարինել «20» թվով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

4/15/2025

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Երևան